10219362

ԲԱԶՄԱՎԷՊ

ԺԶ ՏԱՐԻ, ԹԻՒ 8․ 1858 ՕԳՈՍՏՈՍ 1․

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

ԲՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ե

Տղայ ։

Գերդաստանի մը ձեւանալուն միակ և աստուածակարգ վախճանն է տղայն․ վասն զի անով և անոր համար է գերդաստանին գոյութիւնը ։ Այն նոր արարածը՝ սփոփանք մըն է իր ծնողացը, սփոփանք մը նաև մարդկութեան․ վասն զի առհաւատչեայ մըն է մարդկային ազգին մշտնջենաւորելուն ։

Նոր աշխարհք եկած տղան՝ որչափ ալ նուաստ արարած մը սեպուի, ու գրեթէ անբաններէն քիչ տարբերութիւն ունեցող, իմաստասիրութիւնը ամենևին պիտի չարհամարհէ մարդկութեան այն առաջին ստուերագիրը, կամ գէթ այն ատենէն պիտի սկսի խորհրդական աչքով մը նայիլ անոր վրայ, երբոր մտքի և բանականութեան առաջին նշանակքը երևնան տղուն վրայ ։ Կրնանք ըսել թէ տղու մը բարոյական կեանքը՝ անոր առջի ժմտելուն հետ կը սկսի․ այն ժմիտովը՝ որուն որչափ անտարբեր են օտարք, այնչափ ալ հաճոյական և սիրելի է ծնողաց աչքին, և իմաստասիրի մը մտադրութեանը և սքանչանալուն արժանաւոր․ վասն զի անոր մէջ կը տեսնուի բանական ոգւոյ մը առաջին նշանակը ։ Ուրիշ բոլոր կենդանիներէն աւելի գերազանց ու հանճարեղ լեզու մը ունի․ անոր համար զարմանալի է այն խեղճ ու անկարող արարածին վրայ տեսնել՝ ժմտելու գեղեցիկ լեզուին սկզբնաւորութիւնը, որ քիչ ատենէն փափուկ և բարակ զգածմանց յայտարար պիտի ըլլայ ։ Ժմիտէն ետքը կ'երևնայ տղուն վրայ՝ իր փափուկ բազկացը շարժումն ու տարա-

ծելը, որոնցմէ առջինը ուրախութեան և երջանկութեան նշանակ է, և երկրորդը սիրոյ։ Կը տեսնուի որ տղան կը սկսի ինքիրմէ զգալ, և ոմանց քով մոտենալ և ուրիշներէն հեռանալ՝ երբոր անոնց վրայ բարկութեան և սպառնալեաց նշանակ կը տեսնէ։ Այն որ և իցէ մանր մունր շարժմունքները արհամարհել պէտք չէ. որովհետև անոնցմով կը տեսնուի որ տղայն պարզ մեքենայ մը չէ, այլ նոյն իսկ ծնած ատենէն կը ցուցընէ իր ցեղին յատուկ նշանակները. կ'իմացընէ թէ հոգի մը ունի, զգածմանց և կամաց ընդունակ հոգի մը. կ'իմացընէ թէ սիրոյ արժանի ապրած մըն է, որուն վրայ ամէն կարելի հոգ և խնամք բանեցընելու է։

Տղայ մը սնուցանելու համար՝ հարկ է ճանչնալ զինքը և սիրել. բայց լաւ կերպով սիրելու համար արժան է գիտնալ թէ ինչ ճշմարիտ գեղեցիկ և էապէս սիրելի բաներ կան տղուն վրայ։

Պարզկային կենաց ամէն հասակներն՝ իրենց յատուկ գեղեցկութիւնն ունին։ Ծերութեան գեղեցկութիւնը՝ մեծավայելուչ կերպ մըն է, երիտասարդագունից վրայ խանդաղատական սէր մը, ճշմարտութեան և առաքինութեան վրայ վստահութիւն մը։ Բարական հասակի գեղեցկութիւնը ոյժն է, քաջութիւնը, թէ՛ իր անձը և թէ ուրիշները մեծարելը, և հաստատուն փորձառութիւն մը։ Երիտասարդական հասակի գեղեցկութիւնն է մեծանձնութիւնը, իրմէն մեծերը մտադիրութեամբ պատուելը և սիրելը, և ցածութիւնն ու ախտքը արհամարհելը։ Սակ տղայութեան գեղեցկութիւնը անմեղութիւնն է։

Բայց մանկութեան շնորհքը՝ իր բուն գեղեցկութեանը հետ շփոթելու չէ։ Զջինին կը վերաբերին իր հասակը, շարժմանցը և ձևերուն խանդաղատեցընող փափկութիւնը, շնորհալի կերպերը, ձայնին անուշութիւնը, առաջին թոթովանքը, մտածմանց ախորժ նորութիւնը, արթընցող երևակայութեան մը նշանակները, և այն։ Անոնք անանկ յատկութիւններ են, որ անկարելի է թէ իրենց հետևանքը և ազդեցութիւնը չունենան որ և իցէ մարդու սրտի վրայ։ Բայց բարոյական նկատմամբ՝ մանկութեան գեղեցկութիւնը այդ բաներուն վրայ կայացած չէ։ Ցըղաք կան՝ որոնց արտաքին տեսքը տգեղ է և անշնորհք, որոնց միտքը քութ և դժուարաւ կ'արթընայ, և սակայն անոնք ալ առջիններուն պէս մտադրութեան արժանաւոր են. մինչդեռ ընդհակառակն կը գտնուին աշխոյժ և հանճարեղ տղայք, որոնց վրայ հազիւ կը նայինք. վասն զի ժամանակէ դուրս մանկութիւնին ձգեր են. և այս դէպքը իրենց վրայ՝ ուրախանալու պատճառ մը չէ։

Տղան կրնանք սահմանել անանկ անձ մը՝ որ ինքզինքը չճանչնար։ Վասն զի տղան կը սիրէ, առանց գիտնալու թէ սիրելն ինչ բան է. ընդդիմութիւններ ունի, առանց գիտնալու թէ ինչ բան է ատելութիւնը. մերթ իրեն վրայ կը մտածէ և մերթ ուրիշներուն, բայց առանց անդրադառնալու որ արդեօք իր թէ ուրիշներուն վրայ կը մտածէ. իրեն յօժարութեանցը ետևէ կ'ըլլայ, առանց հասկընալու։ Անկութիւնը՝ կենաց ամէն հասակներէն աւելի անոր քաղցրութիւնը և միայն հաճոյական մասը կը վայելէ. Պոսիւէի գեղեցիկ բացատրութեանը համեմատ՝ իր առագաստները ամէն հողմոյ կը տարածէ, և անոնց տարած տեղը մտադիրութեամբ և սիրով կ'երթայ։ Անոր համար ալ է որ զուարճութեամբ ու գրեթէ նախանձելով մը կը նայինք այն մանրիկ տղայոց վրայ՝ որոնք կարծես թէ իրենք իրենցմէ դուրս ելած, անանկ կը զբաղին իրենց մանկական խաղերովը։ Ընդհակառակն՝ տարիքն առած հասուն մարդը՝ գրեթէ ոչ երբեք կատարեալ հաճոյք մը կրնայ ունենալ. որչափ զուարճութեան մէջ ալ զինքը տեսնաս՝ գիտցիր թէ բան մը կայ որ անոր կը պակսի, որ թէպէտ քու աչքիդ չերևնայ՝ սակայն իրեն ծանօթ է։ Ցգայարանքը կը զուարթանան, բայց երևակայութիւնը զինքը կը

չարչարէ. երևակայութիւնը ուրախութեան մէջ է, բայց խորհրդովքը տագնապած։ Այսն զի նոյն իսկ հաճոյիցը մէջ՝ միտքը և խորհուրդքը անանկ տեղերու և բաներու կ'երթան, որոնք օտար են բոլորովին 'ի հաճոյից։ Իսկ տղայոց խաղերը բնական, իրենց շարժմունքը պարզ, և ուրախութիւնն ալ լի և անչափ. բոլոր հոգւով և սրտով նոյն բանին զբաղած են։

Նոյն հաճոյական կերպը ունի նաև մանկութիւն ծիծաղը։ Տարիքը առած մարդուն խնտալը՝ ծիծաղական բան մը կամ տարօրինակ և իրեն գաղափարէն դուրս բան մը տեսնելէն առաջ կու գայ. իսկ մանկութեան ծիծաղը՝ միայն ներքին ուրախութեան արգասիք է։ Անչինչ բան մը՝ այս աղատ, անմեղ և լեցուն բերնով ծիծաղելուն պատճառ կու տայ. և անոր ներքին գոհութիւնը կը յայտնէ։ Մենք ալ երբեմն այս տըղայական ծիծաղը կ'ունենանք, անպատճառ և ոչինչ բանէ առաջ եկած ծիծաղ մը. և սակայն այն խնտումը՝ ամէն ծիծաղէն աւելի ոյժ տուող և մեր բնութիւնը ցնցող է. կը յիշեցնէ ու սիրելի ընել կու տայ մեզի՝ մանկութիւն երջանկութիւնիս զոր մոռցած ենք։

Տղայոց լացն ալ՝ մտադրութեան արժանաւոր է։ Մենք ըսեր այն լացին համար՝ որ ցաւէ կամ բարկութենէ առաջ կու գայ, այլ այն արտասուաց՝ որ ազիտից հետևանք է։ Տղոց ցաւը զմեզ կը մորմոքէ. վասն զի անոր պատճառը չենք կրնար հասկընալ. անոնց ուժէն և կարողութենէն վեր կը տեսնենք ցաւը, և չենք կրնար ժուժկալել՝ որ անանկ անմեղ և գեղեցիկ հասակ մը այդպիսի վշտեր ունենայ։ Տղուն բարկութիւնը որչափ ալ բանի տեղ չդնենք՝ գիտնալով թէ տգիտութենէ և տկարութենէ առաջ կու գայ, 'ի վերայ այսը ամենայնի դժնդակ և տաղտկալի կ'երևնայ մեզի։ Իսկ անոր վիշտը՝ կը խանդաղատեցընէ զմեզ և կը գորովէ. և այս գորովը և խանդաղատանքն աւելի այն ատեն կը յաճախէ՝ քանի որ կը մտածենք թէ որչափ քիչ բան բաւական է այն խեղճ արարածը վշտացընելու, և որչափ քիչ բան՝ նոյնը սփոփելու համար։ Այս վշտանալուն գիւրութիւնը կը ցուցընէ մեզի՝ թէ որչափ հեռի և տգէտ է ինքը այն բազմապատիկ աղիտից, որ կենաց խեղճութիւնը կը կազմեն. որով միանգամայն կարեկցութիւն և հաճոյք կը զգանք՝ ցաւոց սաստկութիւնը վշտաց փոքրկութեան հետ միացած տեսնելով։ Այսն զի տղան՝ ինչպէս ուրախութեան՝ ասանկ ալ ցաւոց մէջ մէկէն և բոլորովին կ'ընկղմի։ Տարիքը առած մարդուն ցաւը և վիշտը՝ կամաց կամաց կը զօրանան վրան. ընդհակառակն տղունը՝ մէկէն 'ի մէկ վրան կը հասնի, ու մէկէն կ'երթայ, և ոչ իսկ հետք մը ցաւոց թողլով այն երեսին վրայ՝ որ վայրկեան մը առաջ անմիխիթար կը կարծուէր։

Համառօտ ըսենք. տղոց ամէն մէկ գործողութիւնքը հաճութիւն կ'ազդեն մեր վրայ, վասն զի ազատ, երջանիկ, վստահ և անմեղ բնութեան մը արգասիք են. և որոնցմով յայտնապէս կը ցուցընեն թէ աշխարհք և կեանք և անոնց աղէտքը ոչ գիտեն և ոչ կը ճանչնան. կը կրեն և կ'արտասուեն, բայց առանց թշուառ ըլլալու. չարիք կ'ընեն, բայց առանց չար սեպուելու։ Այս խօսքերը ընդհանրապէս կը զլուցենք. վասն զի չենք կրնար ժխտել թէ բնութիւնը որ յամենայնի իւր արտուղութիւնքն ունի, երբեմն այնպիսի տղաք ալ կ'երևցընէ, որ թէ բնական և թէ բարոյական ցաւերով ընկճած են, և որոնց հասակէն առաջ վրանին կը հասնի մարդկային խեղճութեանց զգածումը. կը գտնուին այնպիսիք ալ, որ իրենց ընդունած գէշ դաստիարակութեամբը՝ կրքէ առաջ ախտերը կը սկսին ճանչնալ։ Բայց մանկութիւնը ընդհանրապէս երջանիկ և բարի է. երջանիկ՝ առանց ճանչնալու, և բարի՝ առանց ուզելու. որ կ'ըլլայ ոչ ճշմարիտ երջանկութիւն և ոչ ճշմարիտ բարութիւն։

Զղջած են ամենք յիմաստասիրաց որ մարդկային չարութիւնը՝ ինչուան տըղայոց վրայ ուզած են նկատել։ Ասուրն

Օգոստինոս իր տղայութեանը համար կ'աւանդէ թէ կաթ ուտելուն ժամանակ խածած ըլլայ զդայեակը. և անով առիթ կ'առնու տղայութեան անմեղութեանը դէմ խօսելու։ Բայց իրեն խօսքին դէմ՝ զօրաւորագոյն և աստուածային վկայութիւն մը կայ. անոր խօսքը որ զրուցեց՝ «Թող տուք մանկտւոյդ գալ առ իս». և թէ «Եթէ ոչ դարձջիք և լինիջիք իբրև զմանկտի՝ ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից»։ Ոմանք այս խօսքս ուզած են մեկնել, թէ ինչպէս տղայք հասակաւ փոքրիկ են, ասանկ ալ սուրբերը հարկ է որ փոքր ըլլան խոնարհութեամբ։ Բայց այս մեկնութիւնը կը հակառակի այն աւանդութեանը, որ կը հաւաստարմացընէ մեզի Յիսուսի սէրը առ մանկունս. կը հակառակի բնութեան, որ յորդորամիտ կ'ընէ զմեզ 'ի սիրել զմանկութիւն՝ ոչ միայն անոր համար որ հաճոյական է, ուրախարար և սիրելի, այլ նաև անով որ պարզ է, անկեղծաւոր և անգէտ ամենայնի։

Չենք ուզեր ըսել թէ տղայն ոչ երբեք չար կը գործէ, երբեմն նաև կամաւորապէս։ Բայց նախ գիտնալու է որ մանկութեան մէջ այլ և այլ ժամանակներ կան. չենք կրնար մերժել որ ժամանակ մը կայ՝ յորում տղուն սրտին մէջ կը սկսին երևնալ բարւոյ և չարի գաղափարները. և այն զանազանութեամբը՝ կամաւոր չարութիւնը կը տեսնուի։ Այս ժամանակը շուտ կամ ուշ կու գայ, իւրաքանչիւր տղայոց բնաւորութեանը յարմար. բայց ամէնքն ալ իրենց անմեղ մանկութիւնն ունին, յորում չար կը գործեն՝ առանց գիտնալու կամ առանց հասկընալու. կրնան գիտնալ թէ որ և իցէ գործ մը չար է, և ընել. բայց չեն գիտեր թէ ինչու համար չար է չար գործ մը ընելն։ Զգուշանալու է տղաքը այն կերպով չդատել՝ որով մենք զմեզ կը դատենք. վասն զի անանկ բաներ կան որ չար են՝ եթէ տարիքը առած մարդ մը գործէ, մինչդեռ տղուն համար չար չեն, թէպէտև գիտութեամբ և կամաւորաբար գործէ. և պատճառն այն է՝ որ մեր ունեցած սկզբանց լոյսը կը պակսի իրեն։

Ըսինք թէ ընդհանրապէս մանկութիւնը անգէտ է չարի. որով չենք ուզեր ըսել թէ ամենևին պակասութիւն չունի։ Բայց երկու տեսակ պակասութեանց կան, զորս արժան է իրարմէ զանազանել. պակասութիւնք՝ որ անանջատք են տղուն բնութենէն, և պակասութիւնք՝ որ մանկութեան յատուկ չեն, այլ դէշ դաստիարակութեան մը կամ անխնամ ձգուած բնաւորութեան արգասիք։ Առջիններն անանկ թերութիւնք են՝ որ մանկութեան հաճոյականութիւնը չեն վերցըներ. տարակոյս չկայ որ խնամքով մը անոնց դէմ ալ պատերազմելու է, բայց երբեմն ալ անհրաժեշտ կրելու է։ Իսկ երկրորդներն՝ յաճախ բարեմարդկութեան կերպարանօք կը սպրդին ներս կը մտնեն. և ահա անոնք են զորս արմատաքի խլելու է։ Քիչ տղայք կան՝ որոնց բնաւորութեանը յատուկ սեպուին ախտք. և որովհետև մենք ենք մանկութիւնն անոնցմով ապականողներն, մեզի կ'իյնայ անոնցմէ զգուշացընելու հոգն և խնամքը։

Պէտք չէ միշտ մեծ պակասութեանց տեղ սեպել այն թերութիւնքն՝ որ մեզի աւելի անհաճոյ կ'երևնան։ Աղտոտ տղայ մը անհանդուրժելի կ'երևնայ մեզի, և իրաւամբ. բայց թէ որ խորհրդածենք, կը տեսնենք որ աւելի ծնողաց անհոգութիւնն է պախարակելի. վասն զի տղայ մը ինքնիրեն դժուարաւ կրնայ ըմբռնել թէ ուրիշներուն վրայ ինչ ազդեցութիւն կրնան ընել իր աղտոտ անձը և զգեստները։ Իրեն համար խաղը աւելի հարկաւոր կ'երևնայ, քան թէ իր զգեստուցը վրայ խնամք ունենալ. մաքրութիւնը՝ իր աչքին աւելորդ և ընդունայն ծանրութիւն մը կ'երևնայ. վասն զի ինքը ոչ ուրիշներուն մաքրութեան օգուտը կ'ըմբռնէ, և ոչ ալ իր աղտոտութեան վնասը։

Ուրիշ աւելի մեծ թերութիւնք ալ կան, բայց անոնք ևս մանկութեան բնութեանը յատուկ կրնանք սեպել.

սանկ են՝ ծուլութիւնն և բարկութիւնը։ Բ.մենևին զարմանք չէ որ վառվռուն բնութիւն մը, որ միայն շարժման և շփոթից մէջ կ'ուզէ ապրիլ, դժուարութիւն քաշէ կանոնաւոր կենաց տալ ինքզինքը, և իր թարմ միտքը այնպիսի բաներու զբաղեցընել, որոնք որչափ ալ իր հասակին և կարողութեանը համաձայն ըլլան, անոնց օգուտը և հարկաւորութիւնը ըմբռնելու վիճակի մէջ չէ։ Ո՞վ կրնայ զարմանալ որ տղայ մը հազիւ կրնայ հպատակիլ կանոնաց, հանգարտ և մտաւորական կենաց պարապիլ, և ձեռքը թղթին և աչուընները գրոց վրայ եղած ատեն՝ մտքովը իրեն խաղերուն երթալ, երբոր նոյն իսկ հասակն առած մարդն աշխատանաց ետևէ ընողը՝ շատ անգամ կարօտութիւն բուռն զօրութիւնն է։ Տղուն բարկութիւնը՝ աւելի անարժան է ներողութեան՝ քան թէ անոր ծուլութիւնը. բայց երբ մանկութիւն ճիշդ գաղափարն ունենայ մէկը, ամենևին չզարմանար քանի որ կը մտածէ թէ անիկայ կընմանի այն անփուտ հիւթով մը ուժովցած ծառերուն՝ որոնք աւելի կ'ուզեն կոտրիլ քան թէ ծռիլ։ Տղայ մը ինչուան որ կարենայ ըմբռնել թէ պէտք է որ մեր սրտին շատ ուզածներէն ետ կենանք, որպէս զի կարգի, կանոնաց և հարկի հպատակինք, արժան է որ շատ փորձերէ անցնի. և չզարմանանք երբոր այն փորձառութիւնքը չկրնար ստանալ՝ առանց երբեմն երբեմն դիմադարձելու։

Բ.այս խօսքերէն հետևցընել չենք ուզեր թէ բարկութիւնն և ծուլութիւնը հաճոյական և սիրելի պակասութիւններ են. միայն կ'ուզենք ցուցընել թէ տղայոց բնական թերութիւններ են։ Հարկ է պատերազմիլ և կռուիլ անոնց դէմ, մերթ խստութիւն և մերթ քաղցրութիւն բանեցընելով. մերթ խրատ և մերթ օրինակ. դասատիարակութեան և փորձոյ պատուիրած ամէն հնարքն ու դեղերը բանեցընելով։ Բայց մի կարծեր թէ վախճանիդ հասար, եթէ այն թերութիւքն տղուն վրայէն վերցընելով, ուրիշ աւելի վնասակարագոյն պակասութեանց դուռ բացիր. անանկ թերութեանց՝ որ մանկութեան պարզութիւնը կը վերցընեն, ու տղոց բարոյականը աւրելով՝ կեղծաւոր, երկդիմի, անկարող և անհանդուրժելի մարդիկ կը կազմեն։ Բ.սոնք են ահաւասիկ բուն վտանգաւոր ախտերը, ոչ միայն անոր համար որ տղաքը գեշ կ'ընեն, այլ նաև գեշ մարդիկ կը պատրաստեն։

Որչափ ալ հաճոյական ըլլայ մանկութիւնը՝ և որչափ մեծ սէր ազդէ վրանիս, պէտք չէ որ այնչափ մեծ բանի տեղ դնենք։ Բ.մենամեծ թերութիւն մըն է ծնողաց՝ իրենց տղայոցը բարեմասնութեանց վրայ թէ՛ զաւակաց և թէ օտարաց առջին յաճախ խօսիլ, և անով օգտի տեղ վնասել անոնց՝ զորս իբրև իրենց աչքին բիբը կը սիրեն։ Տըղայքը սիրելի ընողն՝ իրենց ազնիւ կերպն է. անոր համար ալ է ծնողաց ջանքը՝ որ այսպիսի բարեմասնութեամբ հաճոյական ընեն իրենց զաւակը ընկերութեանց և ընտանեկան գումարմանց մէջ։ Բայց երկու տեսակ ազնութիւն կայ. մէկը՝ որ այն զուարթ և գեղեցիկ հասակին անմեղութեանը արգասիք է. իսկ մէկալը՝ վաղահաս նմանողութիւն յառաջացած հասակի մը։ Ենթադրելի է տեսնել տղայ մը՝ որ մեծ մարդու կերպը, ոճը և կենցաղավարութիւնը բանեցընէ. իմաստուն դաստիարակութեան ջանքը պիտի ըլլայ՝ որչափ որ կարելի է յետկարել տղուն մանկութիւնը։ Տղուն երես տալը՝ անկէ ծնողաց վրայ սէրը վերցընել է. որչափ հարք և մարք՝ իրենց զաւակացը Բ.ստուծոյ և բնութեան պահանջածէն աւելի սէր և գուրգուրանք ցուցընելով, ետքը արտասուօք և դառնութեամբ անիծեր են այն սէրը... որչափ ծնողք նաև այս աշխարհիս մէջ իրենց անարժան սիրոյն պատիժը կրեր են։

Տարակոյս չկայ որ տղայն իր մանկութեան հասակին մէջ՝ յընկերութեան տեղ մը չգրաւեր. սակայն ընտանեաց մէջ ունեցած ազդեցութիւնը մեծ է։

Տղան կերպով մը գերդաստանին պաշտպանը կրնայ սեպուիլ։ Կան նաև ընտանիք առանց որդւոյ. կամ ան է որ Աստուած իրենց զաւակ չէ տուած, կամ տուածը ետ առեր է. այս տնտեսութիւնքը անկատար տնտեսութիւնք են. վասն զի քանի որ ամուսինք իրենց ծաղիկ հասակին մէջ են, կրնան իրարմով սփոփուիլ. բայց երբ հասակին և երևակայութեան հետ սէրն ալ կը սկսի պակսիլ, շատ անգամ մինակ երջանկութիւնը ցրտութեան կը փոխուի, և անմիաբանութիւնք կ'երևնան։

Տղան բարիք մըն է գերդաստանի։ Թէ որ ամուսնութիւնը՝ կրից և առժամանակեայ եռանդեան մը արգասիք եղած է, տղու մը ծնունդը տեսակ մը ծանրութիւն և մեծվայելչութիւն կը մտցընէ գերդաստանին մէջ։ Իսկ թէ նոյն ամուսնութիւնն՝ պարզ պատշաճողութեան և խոհականութեան արգասիք է, տղուն ծնունդը՝ նոյն տնտեսութեան եռանդ, աշխոյժ և կրակ կու տայ. որով կերպով մը ծնողաց դաստիարակութեանը հարկաւոր կ'ըլլայ, ինչպէս ծնողք հարկաւոր են տղուն դաստիարակութեանը համար։ Այն ծնողք որ յիրաւի կը սիրեն իրենց տղաքը, ու նուիրական պարտք մը կը սեպեն՝ միայն բարի օրինակ տալ անոնց, կը ջանան նախ իրենք զիրենք դաստիարակել, կիրքերնին զսպել, անվայել խօսքեր և հայհոյութիւնք չզրուցել, ծուլութիւններնուն դէմ կռուիլ, և ամէն փոյթ բանեցընել՝ որ իրենց գործովը խօսքերնին սուտ չհանեն։ Այս իրենց վրայ հսկելուն ջանքը՝ որպէս զի տղայոց օրինակ չարի չըլլան, կամաց կամաց կատարելութեան և ինքզինքնին ուղղելու սկզբունք կը դառնայ։ Տղան՝ անմիաբան գերդաստանի մէջ սէր և խաղաղութիւն կը մտցընէ, վայելչութիւն և պարկեշտութիւն՝ անկարգ տան մը մէջ, կարգ և տնտեսութիւն՝ շռայլ ընտանեաց մէջ։ Այն սուրբ և անմեղ արարածին առջև կը լռեն կիրք, կը ծածկուին ախտք, և գերդաստանը կը մաքրուի. և շատ անգամ կը պատահի որ մինչ կը կարծէ տղայն թէ իւր ծնողաց իմաստութիւնը կ'ընդունի, չգիտեր թէ շատ անգամ ինքն է նոյն իմաստութեան առաջին աղբիւրը։

ԲԱՐՈՅԱՎԷՊ

Թշնամութիւն երկու երկուորեակ եղբարց մէջ:

Դիրոլի Մերան քաղքին մօտերը՝ Փորտ անուամբ հին ու մեծ կիսաւեր դղեակ մը կայ, որ բարձրաւանդակի մը վրայ շինուած է՝ 'ի մէջի բազմութեան թփերու, որոնք ահաւոր ապառաժներու ձեղքերուն մէջ կը բուսնին։ Ադրդջինս գետին գեղեցիկ սահմանքները կ'ոռոգանեն աս ժայռերուն ստորոտը, անոնց վրայի պատած մամուռը միշտ կենդանի կը պահեն, զովութիւն մը կու տան ախորժ հովանեաց, և իրենց խոխոջաձայն զբօսանաց արձագանգները կրկնել կու տան այն իշխանական ապարանքին։ Փորտի թանձր աշտարակները, իր պատերուն մնացորդները՝ որ անկատար կոթողներու նման կանգուն կեցած են, իր վրայի ատամնաձև պսակը՝ տխուր տպաւորութիւն մը կ'ընեն մարդուս վրայ. և չէնքին ծայրը կառուցած եկեղեցին ալ ցաւալի յիշատակ մը ու ցաւալի դէպք մը կը յիշեցընէ. հոն անոր մէջ երկու երկուորեակ եղբարք իրար զիրար սպաններ են։ Լսեն ընթերցողք թէ մարդկային վայրենութիւնը ինչուան ո՛ր աստիճանի կրնայ հասնիլ։

Փորտ դղեկին տէրը կոմսի տիտղոս ունէր։ Ատեն մը եղաւ որ այս կալուածատերանց սերունդէն ելած կոմսերէն մէկը աղջիկ զաւակ մը միայն ունեցաւ, որով իրեն ազգատոհմն ու գերդաստանին անունը մարելու վրայ էր։ Յուսահատած էր կոմսը այս բանիս վրայ. և տեսնելով որ կամաց կամաց իր տարիքը առաջ կ'երթայ ու կը ծերանայ, կ'անիծէր դառնաբար իր կնկանն ամլութիւնը։ Աւանդութիւնը կը պատմէ